



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՆՑ ԾխԱխՈՏԻ ԴԱՇԻՆՔ Coalition For Tobacco Free Armenia

## ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7 հունիսի, 2007

«Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքը՝ իր 28 անդամ կազմակերպությունների կողմից ուղերձ է ուղղել այսօր առաջին նիստին հավաքված ՀՀ չորրորդ գումարման ՀՀ ԱԺ պատգամավորներին:

Իրենց ուղերձում Դաշինքի անդամները հույս են հայտնում, որ նորընտիր պատգամավորական կազմը կանի առավելագույնը ունենալու հզոր, անկախ, և ծաղկուն հայրենիք, հայրենիք, որը հնարավոր է կառուցել միայն առողջ ոգով և մարմնով:

Դաշինքը կոչ է անում միացյալ ուժերով կյանքի կոչելու Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ծխախոտի դեմ պայքարի մասին Շրջանակային կոնվենցիայի դրույթները, մասնավորապես՝

- Պաշտպանել յուրաքանչյուր քաղաքացու առողջ միջավայրի իրավունքը՝ բոլոր փակ հասարակական վայրերն ու աշխատատեղերը դարձնելով 100% ազատ ծխախոտի ծխից;
- Իրականացնել ծխախոտային արտադրատեսակների նկատմամբ արդյունավետ գնային և հարկային քաղաքականություն՝ բարձրացնելով ծխախոտի հարկերը, այդպիսով խթանելով հատկապես երիտասարդության շրջանում ծխախոտի օգտագործման նվազեցմանը և ապահովելով պետական բյուջեի եկամուտների էական ավելացում;
- Արգելել ծխախոտի գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության բոլոր ձևերը, քանի որ միայն լիակատար արգելումը կհանգեցնի ծխախոտի օգտագործման նվազեցմանը:

*Հայաստանը պաշտոնապես միացել է ԱՀԿ ծխախոտի դեմ պայքարի մասին Շրջանակային կոնվենցիային 2004թ. նոյեմբերի 29-ին ՀՀ նախագահ Քոչարյանի կողմից համաշխարհային հակածխախոտային պայմանագիրը ստորագրելուց և ՀՀ ԱԺ կողմից նույն թվականի հոկտեմբերի 12-ին վավերացնելուց հետո:*

**ՏԵՂԵԿԱՆՔ.** «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքը ստեղծվել է երեք տարի առաջ՝ 2004թ. հունիսի 11-ին, տասներկու հիմնադիր ՀԿ-ների կողմից և այսօր միավորում է 28 անդամ կազմակերպություններ: Լրացուցիչ տեղեկությունների համար՝ Նարինե Մովսիսյան, Դաշինքի կոորդինատոր, 51 26 17, nmovsesi@aua.am



**CHILDREN'S HEALTH CARE ASSOCIATION**  
ԵՐԵՎԱՆԻ ԱՈՒՂՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՈՒՄԱՆ ԱՄՈՑՄԱՅԻՆ

